8374

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«01» 06 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0099-23

Ձեռնարկողը՝ ***«ԵԳՈՐՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ, գ. Ներքին Գետաշեն, Վերին Դուրան 5

Գործունեությունը՝ ***Արգիճիի կրաքարերի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 էջ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0099-23

< 01 > 06 2023թ.

Արգիճիի կրաքարերի երևակման տարածքում 2023-2024 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԵԳՈՐՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ, ուսումնասիրության ծրագիր, թափոնների կառավարման պլան (Գ կատեգորիա)
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վերին Գետաշեն բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ Արգիճիի կրաքարերի երևակման տարածքում 2023-2024թթ. ընթացքում նախատեսվում է կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ «ԵԳՈՐՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ-ի ֆինանսական միջոցներով:

Նախատեսվող գործունեության նպատակն է պարզաբանել և արդյունաբերական կարգով օգտակար հանածոյի պաշարները հաշվարկել որպես երեսապատման նյութ «Քարաբլոկներ բնական քարերից երեսապատման իրերի արտադրության համար» ԳՕՍՏ 9479-2014, իսկ թափոնները որպես շինարարական ավազի և խճի հումք ԳՕՍՏ 22263-76 տեխնիկական պահանջներին համապատասխան:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը Գ կատեգորիայի գործունեության տեսակ է:

Նկարագրական մաս. Արգիճիի կրաքարերի երևակման տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքի Վերին Գետաշեն բնակավայրի վարչական սահմաններում: Հարակից Նշխարք բնակավայրից գտնվում է շուրջ 7կմ, իսկ Վ. Գետաշեն բնակավայրից 17կմ հեռավորության վրա: Երևակման շրջանում են գտնվում «Փոքր Արգիճի» («Փոքր Այրիջա»), «Մեծ Արգիճի» («Մեծ Այրիջա») և «Սպիտակ Աղբյուր» ֆերմաները, համապատասխանաբար՝ 5, 1.2, 0.6կմ հեռավորությունների վրա: Երևակման տարածքից մոտ 6.6կմ արևելք անցնում է Սևան-Մարտունի-Գետափ Մ-10 միջպետական նշանակության ավտոճանապարհը, որի հետ տեղամասը կապված է գրունտային ճանապարհներով:

Երևակման շրջանը գտնվում է Գեղամա և Վարդենիս հրաբխային լեռնաշղթաների միացման մասում: Գեոմորֆոլոգիական առումով հանքային դաշտը գտնվում է մեղմ թեքություններով սարահարթի վրա: Շրջանում բացարձակ բարձրությունները տատանվում են 1900-2830մ, երևակման շրջանում՝ 2305-2325մ սահմաններում: Հիմնական ջրագրական միավորները Արգիճի, Փոքր Արգիճի և Գայլաձոր գետերն են, որոնց հուները գտնվում են երևակման տարածքից 1.02-6.4կմ հեռավորությունների վրա: Համաձայն Հայտի՝ օգտակար հանածո հանդիսացող կրաքարերի հաստվածքը ջրազուրկ է՝ պայմանավորված լեռնային զանգվածում տարբեր ծագման բազմաթիվ ճեղքերի, ճաքերի առկայությամբ: Երևակման տարածքը ներկայացված է վերին կավճի կարբոնատային ապարների ժայռային մերկացումներով, տարածքը զուրկ է բուսածածկույթից, հողաբուսական շերտ տարածքում չի ձևավորվել: Երևակման տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքներ նախկինում չեն իրականացվել և հետախուզական փորվածքներ չեն անցել:

Շրջանի կլիման չափավոր զով է, խոնավ, տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 300-500մմ: Օդի առավելագույն ջերմաստիճանը դիտվում է հուլիսին՝ +32°C, իսկ նվազագույնը հունվարին՝ -42°C: Հայցվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 300 սմ/վ^2 կամ 0.3g: Երևակման տարածքում սողանքային երևույթներ զարգացած չեն:

Արգիճիի կրաքարերի երևակումը գտնվում է Սևանա լճի ջրհավաք ավազանում, «Սևան» ազգային պարկի սահմաններից մոտ 20 կմ հեռավորության վրա:

Համաձայն Հայտի՝ երևակման տեղամասում բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան:

Արգիճիի կրաքարերի երևակման տեղամասը ARM WGS-84 կոորդինատային համակարգով բնութագրվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝

	X	Y
1.	4428071.0	8512879.0
2.	4428231.0	8512946.0
3.	4428299.0	8513058.0
4.	4428242.0	8513095.0
5.	4428228.0	8513046.0
6.	4428191.3	8513073.0
7.	4428174.3	8513136.8
8.	4428097.0	8513211.0
9.	4428071.0	8513149.0
10.	4428065.0	8513021.0

Հայցվող տարածքը (մակերեսը 4.211092 հա), համաձայն տեղեկատվության, ներկայացված կոորդինատներով կադաստրային քարտեզում տեղադրելիս գտնվում է << Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վերին Գետաշեն բնակավայրի՝ պետական սեփականության գյուղատնտեսական նշանակության 05-087-0355-0001 կադաստրի ծածկագրով հողամասի սահմաններում:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով իրականացվելու է երկրաբանահանույթային աշխատանքներ 4.2հա տարածքի վրա:

Հորատման աշխատանքներն իրականացվելու են սյունակային ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով՝ կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-96 մմ տրամագծով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Նախատեսվում է հորատել 7- 24 մետր խորության 4 հորատանցքեր (Հ-1 7մ, Հ-2 17մ, Հ-3 24մ և Հ-4 18մ) 66.0 մետր ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը 80-85%: 1-ին խմբի 4 հորատանցքերի հորատումն իրականացվելու է ՈՒԳԲ-1ՎՍ տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 4 տեղակայում և տեղահանում:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները կատարվելու են 1:100 մասշտաբով:

Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով փորձնական բացահանքից կատարվելու է 150.0մ³ ընդհանուր ծավալով փորձնական հանույթ թարմ ապարներից: Լեռնազանգվածից մենաքարերի պոկումը կատարվելու է մեխանիկական, հորատասեպային եղանակով՝ օգտագործելով բնական ճեղքերը: Մենաքարերը կենթարկվեն շտկամշակման ГОСТ 9479-98-ի տեխնիկական պահանջներին համապատասխան բլոկների ստացման նպատակով:

Բլոկներից երեսպատման սալիկների ելքի որոշման նպատակով կիրականացվի ընդհանուր ծավալով ստացված բլոկների փորձնական սղոցում, որը կկատարվի ընկերությանը պատկանող քարի մշակման արտադրամասում:

Նախատեսվում է կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 4.2 հա մակերեսով տարածքում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական մերկացումների գործիքային տեղադրմամբ տոպո հիմքի վրա:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից և փորձնական բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով հորատանցքերից կնմուշարկվի 12 հանուկային նմուշներ, 10 մենաքարեր՝ նմուշների երկարությունը մինչև 5մ: Կրաքարերի քիմիական կազմի ուսումնասիրությունը կկատարվի 2 նմուշներով: Պետրոգրաֆիական նկարագրությունը կիրականացվի հորատանցքերից վերցված 2 նմուշներից պատրաստված հոկուկների հիման վրա: Ընդհանուրը կկազմի 26 նմուշ:

Լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումները կատարվելու են հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում («Անալիտիկ» ՓԲԸ կամ «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ):

Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի հարթ ռելիեֆը, ինչպես նաև ճանապարհների բարվոք վիճակը՝ նախատեսված աշխատանքների իրականացման համար հորատման հրապարակների շինարարություն չի նախատեսվում: Հորատման ժամանակ կառուցվելու է 210 մ երկարությամբ ճանապարհ:

Փաստագրումից և նմուշարկումից հետո կատարվելու է հորատման հաստոցի տեղակայման վայրերի փխրեցում, հարթեցում և լանդշաֆտի վերականգնում: Փորձնական բացահանքի ժամանակ առաջացող փուշտա շերտի կրաքարերը և բլոկների փորձնական արդյունահանումից առաջացած թափոնները օգտագործվելու են լանդշաֆտային ամբողջականության վերականգնման համար: Ռելիեֆի վերականգնման նպատակով օգտագործվելու է հեռացված 37.5մ³ ծավալով փուշտա շերտը:

Հետախուզական փորվածքների անցման ժամանակ հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի դրսևորվելու, քանի որ երևակման տարածքում հողաբուսական շերտ չկա: Այն ներկայացված է կրաքարերի ժայռային մերկացումներով, որոնց մերձմակերևութային մասը հողմահարման հետևանքով ջարդոտվել է վերածվելով տարաչափ բեկորների: Հողերի խախտում կկատարվի 210մ երկարության ճանապարհի կառուցման ժամանակ, հողային աշխատանքների ծավալը կկազմի մոտ 420մ³: Նշված աշխատանքների համար կհատկացվի

02543163 ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

. 112.5 հազ.դրամ: Ճանապարհի վերականգնում չի նախատեսվում, այն օգտագործվելու է հարակից ֆերմաների բնակիչների կողմից:

Ինժեներա-հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով դիտարկումներ են իրականացվելու հորատանցքերի և բացահանքի անցման ընթացքում:

Աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են 2023թ. 3-րդ եռամսյակից մինչև 2024թ. 4-րդ եռամսյակը:

Գործունեության իրականացման ընթացքում Արգիճի գետից տեխնիկական նպատակներով ջրառի կատարման համար ընկերությունը դիմելու է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով: Խմելու ջուրը գնվելու է շշալցված տարբերակով, երևակման տարածք տեղափոխվելու է աշխատանքները սպասարկող մեքենայով:

Կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են նախապես կառուցված, բետոնապատ անթափանց ջրհորի մեջ, աշխատանքների ավարտից հետո հորը դատարկվելու է «Գավառի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից պայմանագրային հիմունքներով:

Հորատանցքերի հորատումը և փորձնական հանույթն իրականացվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներով, որոնք տեղամասում գտնվելու են կարճ ժամանակ՝ բացառելու համար նախատեսվող ուսումնասիրության աշխատանքների ընթացքում բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոնների (մեխանիզմների յուղեր, քսայուղեր, մետաղաջարդոն, անվադողեր և այլն) առաջացումը: Չտեսակավորված կենցաղային աղբը կազմելու է օրական 10 կգ:

Տեղամասում տեղադրվելու է շարժական վագոն-տնակ աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար: Հարակից տարածքներից ներգրավող աշխատուժի համար ընկերությունը վարձակալելու է կացարաններ Նշխարք գյուղում:

Դաշտային աշխատանքներից հետո լաբորատոր ուսումնասիրությունների դրական արդյունքի դեպքում կատարվելու են աշխատանոցային աշխատանքներ՝ երկրաբանական հաշվետվության (պաշարների հաշվարկով) և հանքավայրի արդյունահանման նպատակահարմարության ՏՏՀ-ի կազմման աշխատանքներ՝ համապատասխան գծագրական հավելվածներով:

Դաշտային աշխատանքների կարճատև լինելու հանգամանքով պայմանավորված /2-3 ամիս/՝ մեխանիզմների շահագործումից առաջացած վնասակար ծխագազերը, հորատման ընթացքում առաջացող արտանետումները և աղմուկի մակարդակը չեն գերազանցելու սահմանային թույլատրելի նորմերը: Բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները լինելու են աննշան, քանի որ աշխատանքները կատարվելու են բուսական ծածկույթից զուրկ տարածքում, կենդանատեսակների բնադրավայրերից հեռու:

Հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով ճանապարհների ջրցան տարվա չոր և շոգ եղանակներին,
- օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով,
- տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ապահովում հարակից բնակավայրերի համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններում,

- նավթամթերքների, նավթամթերք պարունակող մնացորդների, քսայուղերի պահեստավորման բացառում Արգիճիի երևակման տարածքում,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության կանոնակարգված տեղափոխում,
- երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում կենդանիների բների հայտնաբերման նպատակով: Հայտնաբերման դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքային տարածքից դուրս,
- լանդշաֆտային ամբողջականության վերականգնում փորձնականան բացահանքի տարածքում, հորատման հաստոցի տեղակայման վայրերի փխրեցում, հարթեցում և այլն:

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական ցուցանիշների պարբերական չափումներ (շաբաթը մեկ անգամ),
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ (տարին մեկ անգամ),
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով երևակման տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ (ամիսը մեկ անգամ),
- կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն դիտարկում տեղամասում և հարակից տարածքներում,
- աղմուկի մակարդակի վերահսկողություն:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 430.0 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում շինարարական նյութերի պահանջարկի բավարարման նպատակով: Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը լինելու է կարճատև և սեզոնային, ուստի ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային:

Փորձաքննության գործընթացում Հայտը ներկայացվել է Գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով: Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ Արգիճիի կրաքարերի երևակման ուսումնասիրության աշխատանքները ընդհանուր առմամբ Սևանա լճի և Սևանի ջրհավաք ավազանի համար էական բնապահպանական ռիսկեր ունենալ չեն կարող: Սակայն լեռնարդյունաբերական գործունեության գումարային ազդեցությունը Սևանա լճի էկոհամակարգի, ջրհավաք ավազանի և լանդշաֆտի վրա կարող է հանդիսանալ էական բնապահպանական ռիսկ, հետևաբար հետագա հանքավայրի շահագործման վերաբերյալ ՀՀ ԳԱԱ Սևանա լճի հանձնաժողովը չի կարող երաշխավորել դրական եզրակացության տրամադրում:

Փորձաքննության ընթացքում Հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վերին Գետաշեն բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ: Փորձաքննական գործընթացին մասնակցել են արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկում, արդյունքները ներառել մշտադիտարկման պլաններում:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ և «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով:
- Երկրաբանահետախուզական աշխատանքները կազմակերպելիս չխոչնդոտել գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
- Ապահովել Հայտում ամրագրված լանդշաֆտային ամբողջականության վերականգնման աշխատանքների իրականացումը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին:
- Պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԵԳՈՐՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արգիճիի կրաքարերի երևակման տեղամասում 2023-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության Հայտով նախատեսվող գործունեությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան